ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

15 օգոստոսի 2024 թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 19 անդամներ:
Բացակա էին՝ Լուսինե Սանոյանը, Վահան Հունանյանը, Թորգոմ Համբարձումյանը, Նաիրա Պողոսյանը, Գեվորգ Պասկեվիչյանը, Խաժակ Վարաժյանը, Սոնա Հովհաննիսյանը, Սենիկ Խուբեսարյանը, Զոյա Միքայելյանը, Շավարշ Արամյանը, Հայկ Ստեփանյանը, Հասմիկ Մարգարյանը, Կարեն Մալխասյանը, Կալիպսե Ասատրյանը:
Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար Կարեն Բաղալյանը:
Նիստը վարում էր համայնքի ղեկավար Վարդգես Սամսոնյանը:

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝ Գյումրու համայնքապետարանի ստորաբաժանումների պետերը, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներ խմբակցությունների փորձագետներ, **ՀՀ համայնքների միության գլխավոր խորհրդական, «Դաշինք՝ հանուն կայուն և կանաչ» կառավարման ծրագրի ղեկավար** Ն. Լափաուրին, **«Հայաստանում Շվեցարական կազմակերպության Ակադեմիա» փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ** Խ.Հակոբյանը:

ԼՍԵՑԻՆ

1. *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ՋԻՎԱՆՈՒ ՓՈՂՈՑ N 74 ՀԱՍՑԵԻ ՇԻՐԱԿԻ ԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՇԵՆՔԸ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

(ԶԵԿ. ՄԿՐՏԻՉ ԴԱՎԹՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, քաղաքացիական օրենսգրքի 605 հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 13-ի «Պետական սեփականություն հանդիսացող գույքի նվիրաբերության կարգը հաստատելու մասին» N 1067-Ն որոշմամբ հաստատված կարգի 10.1-ին կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի տեղակալի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված 02.1//06833-2024 գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի հուլիսի 26-ին N 12748-2024 թվագրմամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Համաձայնություն տալ պետական սեփականություն հանդիսացող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ջիվանու փողոց N 74 հասցեում տեղակայված Շիրակի երկրագիտական թանգարանի շենքը Գյումրի համայնքին նվիրաբերելու առաջարկությանը:
2. Սույն որոշման N 1 կետում նշված շենքի նվիրաբերությունը ընդունելուց հետո, որպես պարտավորություն գույքը փոխանցել «Հայաստանում Շվեցարական կազմակերպության Ակադեմիա» փակ բաժնետիրական ընկերությանը Գյումրիում Լոզանի հյուրընկալության դպրոցի մասնաճյուղ բացելու նպատակով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրվանից:
Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 162-Ա)*

ԼՍԵՑԻՆ

2. «ԴԱՇԻՆՔ՝ ՀԱՆՈՒՆ ԿԱՅՈՒՆ ԵՎ ԿԱՆԱՉ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ» ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՆԵՐԴՐՄԱՆ/ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

«Դաշինք՝ հանուն կայուն և կանաչ» կառավարման ծրագրի շրջանակներում ձեռք է բերվել թվով 10 (տասը) էլեկտրականավտոբուս: Համաձայն պայմանագրի ավտոբուսները մատակարարվել են սույն թվականի հուլիս ամսին, մինչդեռ Հարկային օրենսգրքում 2023 թվականի նոյեմբերի 16-ին կատարվել է փոփոխություն, համաձայն որի սահմանվում է 2 տոկոս դրույքաչափով բնապահպանական հարկ, որը լրացուցիչ ֆինանսական ծանրաբեռնվածություն է առաջացնում մատակարարի համար, լրացուցիչ գումարը կազմում է 12 333 000 (տասներկու միլիոն երեք հարյուր երեսուներեք հազար) Հայաստանի Հանրապետության դրամ Վանաձոր և Գյումրի համայնքների համար, որը հավասարաչափ կբաժանվի երկու համայնքների միջև: Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք կատարել փոփոխություն Վանաձոր և Գյումրի համայնքների միջև 2021 թվականի հունիսի 29-ին կնքված համաներդրման պայմանագրում՝ ավելացնելով Գյումրի համայնքի համաներդրման չափը 6 166 500 (վեց միլիոն հարյուր վաթսունվեց հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամով:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնքի ղեկավարի պաշտոնակատար Ա.Փելեշյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված գրությունը (համայնքապետարանում մուտքագրված 2024 թվականի օգոստոսի 1-ին 12955 թգագրմամբ) **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. «ԴԱՇԻՆՔ՝ հանուն կայուն և կանաչ կառավարման» ծրագրով նախատեսված բաղադրիչների իրականացման համար, որպես համաներդրում/համաֆինանսավորում/ հատկացնել 6 166 500 (վեց միլիոն հարյուր վաթսունվեց հազար հինգ հարյուր) Հայաստանի Հանրապետության դրամ:
2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024թվականի բյուջեի 1/6/1 գործառական դասակարգման (4637) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայքների ոչ առևտրային կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 163-Ա)*

ԼՍԵՑԻՆ

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ 1 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՇԵՆՔԻ ԵՎ ԱԶՆԱՎՈՒՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՐՁԱՆԻ ՈՒ ԿԱՄԱՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԼԵՆԱ ՋԻԼԱՎՅԱՆ)

Ավագանու անդամների կողմից նախագծի վերաբերյալ հնչեցին տարբեր կարծիքներ: Երկար քննարկումներից հետո ավագանու մի քանի անդամների կողմից առաջարկվեց առայժմ լուսավորել միայն Ազնավուրի արձաննու կամարը, իսկ ակնհայտ արդյունքը տեսնելուց հետո նոր մյուս շենքերը: Առաջարկության քվեարկության արդյունքում՝ ձայների մեծամասնությամբ նախագիծը դրվեց քվեարկության լրամշակված տեսքով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ ԱԶՆԱՎՈՒՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՐՁԱՆԻ ՈՒ ԿԱՄԱՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Անկախության հրապարակ 1 հասցեում գտնվող Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի Գյումրու մասնաճյուղի շենքը և Ազնավուրի հրապարակում գտնվող Շառլ Ազնավուրի արձանն ու կամարը կարիք ունեն արտաքին լուսավորության ցանցի կառուցման և գեղարվեստական լուսավորության ապահովման:

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06-ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով և հիմք ընդունելով բնակկոմունալ և շրջակա միջավայրի պահպանության բաժնի պետի ժ/պ Մարտին Սարուխանյանի՝ Գյումրի համայնքի ղեկավարին ուղղված 2024 թվականի օգոստոսի 02-ի զեկուցագիրը՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ազնավուրի հրապարակում գտնվող Շառլ Ազնավուրի արձանի ու կամարի գեղարվեստական լուսավորության աշխատանքներն իրականացնելու համար հատկացնել 1 700 000 (մեկ միլիոն յոթ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որից 1 438 000 (մեկ միլիոն չորս հարյուր երեսունութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամը հատկացվում է արտաքին լուսավորության ցանցի կառուցման և գեղարվեստական լուսավորության ապահովման աշխատանքների համար, 262 000 (երկու հարյուր վաթսուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամը՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազման համար:

2. Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ-գլխավոր ֆինանսիստին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գումարի հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի 2024 թվականի բյուջեի 6/4/1 գործառական դասակարգման (5129) «Այլ մեքենաներ և սարքավորումներ» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ 1 438 000 (մեկ միլիոն չորս հարյուր երեսունութ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ և 1/5/1 գործառական դասակարգման (5134) «Նախագծահետազոտական ծախսեր» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ 262 000 (երկու հարյուր վաթսուներկու հազար) Հայաստանի Հանրապետության դրամ՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 164-Ա)*

Հայաստանի հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանի

Վ.ՍԱՄՍՈՆՅԱՆ_____

Գ.ՄԵԼԻՔՅԱՆ_____

Մ.ՍԱՀԱԿՅԱՆ_____

Տ.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ_____

Ա.ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ_____

Հ.ԱՍԱՏՐՅԱՆ_____

Ա.ԲԵՅԲՈՒՏՅԱՆ_____

Ա.ՊԱՊԻԿՅԱՆ_____

Ք.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ_____

Լ.ՄՈՒՐԱԴՅԱՆ_____

Ա.Մ.ՄԱԹՈՍՅԱՆ_____

Ն.ԲԵԳՋԱԴՅԱՆ_____

Վ.ՀԱԿՈԲՅԱՆ_____

Պ.ԳԵՎՈՐԳՅԱՆ_____

Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ_____

Կ.ՍՈՍՅԱՆ_____

Ս.ԱԴԱՄՅԱՆ_____

Ն.ՄԻՐԶՈՅԱՆ_____

Վ.ՀԱԿՈԲՅԱՆ_____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՐԴԳԵՍ ՍԱՄՍՈՆՅԱՆ**

ք. Գյումրի
2024թ. օգոստոսի 15